

4617



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Հրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

«04» 07 2024թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 114 - 24

Նախաձեռնող՝

«Հայնախագիծ» ԲԲԸ  
ք. Երևան, Չարենցի 1

Գործունեությունը՝

«Կոտայք-10» միկրոռեզիոնալ մակարդակի համակցված  
տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա  
միջավայրի վրա ազդեցության ուղղման արձանագրության  
գնահատման հաշվետվություն  
Կոտայքի մարզ

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 114 - 24

« 04 » հունիսի 2024թ.

**«Կոտայք-10» միկրոռեզիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի (ՄՄՀՏՊՓ) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվություն**

Ձեռնարկող՝	«Հայնախագիծ» ԲԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Հիմնադրույթային փաստաթուղթ
Ներկայացված նյութեր՝	ՄՄՀՏՊՓ նախագիծ, շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման /ՌԷԳ/ հաշվետվություն, գծագրական նյութեր
Իրականացված վայրը՝	Կոտայքի մարզ, Զրվեժ խոշորացված համայնքի Զրվեժ, Ձորաղբյուր և Զովք բնակավայրեր

**Ներածական մաս.** Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-110-Ն) 14-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Կոտայք-10» միկրոռեզիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը (ՄՄՀՏՊՓ) հանդիսանում է հիմնադրույթային փաստաթուղթ:

«Կոտայք-10» միկրոռեզիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը մշակվել է Քաղաքաշինության կոմիտեի պատվերով (N ՀՀԲԿ-ԲՄ ԱՇԶԲ-23/2) և նույն լիազոր մարմնի կողմից տրամադրված Տեխնիկական բնութագրին համապատասխան:

Միկրոռեզիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծի նպատակն է միկրոռեզիոնում ներառված բնակավայրերի տարածական պլանավորման միջոցով բարենպաստ կենսամիջավայրի ձևավորումը, կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, տարածական տնտեսական գործունեության համակարգված կազմակերպումը, ինչպես նաև համայնքների գործառնական-հատակագծային տնտեսական և մշակութային, ճարտարապետա-հատակագծային կառուցվածքի և գոտևորման խնդիրներին ուղղված միջոցառումների մշակումը:

**Նկարագրական մաս.** «Կոտայք-10» ՄՄՀՏՊՓ նախագիծն ընդգրկում է Կոտայքի մարզի Զրվեժ խոշորացված համայնքի Զրվեժ, Ձորաղբյուր և Զովք բնակավայրերը:

Կոտայքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում, ծովի մակերևույթից մոտ 900-2500 մ բարձրության վրա: Կոտայքի մարզը չունի միջպետական սահման ՀՀ հարևան որևէ պետության հետ, արևելքում սահմանակցում է Գեղարքունիքի մարզին, հյուսիսում և հյուսիս-արևելքում համապատասխանաբար Լոռու և Տավուշի մարզերին, հարավում սահմանակից է Արարատի մարզին և քաղաքամայր Երևանին, արևմուտքում՝ Արագածոտնի մարզին: Մարզկենտրոնն է Հրազդանը, մարզկենտրոնից մինչև մայրաքաղաք 45 կմ է:



Մարզի կենտրոնական մասով անցնում են երկրի համար առանցքային նշանակություն ունեցող Երևան-Հրազդան-Սևան ավտոմայրուղին և Երևան-Հրազդան-Իջևան երկաթգիծը, Թբիլիսի-Երևան երկաթուղու մի հատվածը:

Դիտարկվող տարածքն ընդգրկված է նախալեռնային բնական լանդշաֆտային գոտում: Գոտու տարածքը հիմնականում հարթ է (մինչև  $3^\circ$  թեքություններ): Պասիվ են արտահայտված հիդրոլոգիական պրոցեսները: Թեք ու անտառազուրկ լանջերում շատ են հեղեղատներն ու փոքր հովիտները: Գոտու հողատարածություններն օգտագործվում են և ամբողջապես ծածկված են հացահատիկի և կերախոտերի ցանքերով:

Կոտայքի մարզի հողաբուսական ծածկույթը բավականին խայտաբղետ է: Գերակշռում են լեռնատափաստանային և լեռնաշագանակագույն, բարձրադիր վայրերում՝ ենթալպյան լեռնամարգագետնային, սևահողանման ու դարչնագույն հողերը: Գետահովիտներում կուլտուրացված ոռոգվող հողեր են: Բարձրադիր մասերում տարածված են խոտհարքներն ու ամառային արոտավայրերը:

Մարզի տարածքում են գտնվում Գեղամա լեռների փեշերը, Ծաղկունյաց լեռնաշղթան, Հատիս և Արայի լեռները:

Կոտայքի մարզի տարածքով են հոսում Հրազդան, Մարմարիկ և Ազատ գետերը: Գետերի ջրերն օգտագործվում են հիմնականում ոռոգման նպատակով:

Մարզի տարածքը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով (գրանցված են 3208 պատմամշակութային արժեքներ և հուշարձաններ):

Կլիման այստեղ առանձնանում է շեշտված կոնտինենտալ /չորային/ ռեժիմով, երբ օդի ջերմաստիճանի տարեկան ամպլիտուդը հասնում է  $27,5^\circ$  C, իսկ միջին տարեկան ջերմաստիճանը՝  $8,8^\circ$ C: Շեշտակիորեն ընդգծված է նաև ջերմաստիճանի օրական տատանումը: Մթնոլորտային տեղումները համեմատաբար քիչ են՝ 450 մմ տարեկան, գարնանային մաքսիմումով՝ 171 մմ:

Քամու տարեկան միջին արագությունը 2-3 մ/վրկ է: Հարաբերական խոնավությունն ունի պարզ արտահայտված տարեկան և օրական ընթացք՝ ամռանը՝ 46-52 %, ձմռանը՝ 74-81 %: Ձյան ծածկույթով օրերի թիվը փոքր է, սակայն առանձին տարիներին ձևավորվում է կայուն և խորը ձյան ծածկույթ:


Կոտայքի մարզը սակավ անտառածածկ վարչատարածքային միավոր է: Բնական պայմանների բազմազանության պատճառով նպաստավոր պայմաններ են ստեղծվել լեռնատափաստանային, լեռնաանտառային և մերձալպյան, մասամբ նաև ալպյան բուսականության աճման և զարգացման համար:

Կոտայքի մարզի կենդանական աշխարհին բնորոշ են հիմնականում լեռնատափաստանային կենդանատեսակները:

Տարածաշրջանի էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումն ապահովելու նպատակով՝ կազմակերպվել է բնության հատուկ պահպանվող տարածք՝ «Զրվեժ» անտառպարկը՝ 423.8 հա մակերեսով: «Զրվեժ» անտառապարկը սահմանակից է Ողջաբերդ համայնքին և Երևան քաղաքին: Ծառերի տեսակային կազմը ներկայացված է սոճու, եղևնու, թեղու, բարդու, հացենու և այլ ծառաթփային բույսերի տարբեր տեսակներով:

Կոտայքի մարզն արդյունաբերական տեսանկյունից համարվում է զարգացած: Հարուստ է օգտակար հանածոների՝ ոսկու, ալյումինի, երկաթի, պերլիտի, մարմարի, գրանիտի, պեմզայի, նեֆելենային սիենիտների, անդեզիտի, հրաբխային խոտանների, բազալտի, քարաղի, զանազան շինարարական նյութերի և հանքային ջրերի 3 կառույց հանքավայրերով (Հանքավան, Բջնի, Արզնի):

Կոտայքի մարզն ունի զարգացած ու բազմաճյուղ տնտեսություն: Մեծ թիվ են կազմում քարամշակման, էներգետիկայի, մեքենաշինական, սննդի արդյունաբերության,





հանքարդյունահանման, ձկնաբուծության, շինանյութերի, փայտամշակման և այլ ձեռնարկությունները:

Կոտայքի մարզի զբոսաշրջության ոլորտն իր հարակից ենթակառուցվածքներով և նպաստավոր բնակլիմայական պայմաններով, պատմամշակութային և բնական հուշարձանների հարուստ բազմազանությամբ, պահպանված ժողովրդական ավանդույթների և սովորույթների շնորհիվ կարող է դառնալ ոչ միայն հանրապետության, այլ տարածաշրջանի տուրիստական կենտրոններից մեկը, քանզի վերը նշված նպաստավոր պայմանները կարող են դառնալ տուրիզմի տարբեր տեսակների զարգացման ամուր հենքը՝ մասնավորապես, ագրոտուրիզմի, գյուղական տուրիզմի, լեռնադահուկային, ինչպես նաև այլ տուրիստական կենտրոնների համար:

Միկրոռեգիոնալ տարածական պլանավորման հիմնադրությային փաստաթղթի մշակման հիմքում դրված է տարածքային զարգացման հիմնական ուղղությունների, ներդրումների համար առավել բարենպաստ ոլորտների ընտրությունը և դրանց տարածքային տեղաբաշխման գոտիների հատակագծային կազմակերպումը, այդ հենքի վրա այնպիսի քաղաքականության մշակումով, որի իրականացումը կնպաստի մարզի տնտեսական զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը և բնակչության ապրելակերպի բարելավմանը:

Առաջադրվող ծրագրային փաստաթղթում արտացոլվում են միկրոռեգիոնում ներառված համայնքների տարածքային զարգացման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող քաղաքաշինական ծրագրային հիմնական գործողությունները, որոնք անհրաժեշտ են տարածքների մրցունակությունը բարձրացնելու և Հայաստանի մարզերի միջև զարգացման առկա անհամաչափությունները մեղմելու համար:

«Կոտայք-10» միկրոռեգիոնի գյուղական համայնքներում առկա են սոցիալ-կենցաղային, ինժեներա-տրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքների հետ կապված հիմնախնդիրներ, որոնց համար համայնքների զարգացման ծրագրերում ՄՄՀՏՊ փաստաթղթով առաջարկվել են հեռանկարային զարգացման ուղղություններ / լուծումներ:

«Կոտայք-10» տարածաշրջանի բնակավայրերի շրջակա միջավայրի վրա տեխնաձին ազդեցության հիմնական գործոններն են.

- մթնոլորտային օդի աղտոտումն արդյունաբերական ձեռնարկությունների, ջեռուցման և ավտոտրանսպորտի արտանետումներով,
- մակերևութային ջրերի աղտոտումն արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերով,

- հողերի աղտոտումը կոշտ կենցաղային թափոններով,

- աղմուկը և էլեկտրամագնիսական ճառագայթումը:

«Կոտայք-10» միկրոռեգիոնում ներառված Զրվեժ, Ձորաղբյուր և Զովք բնակավայրերը գազաֆիկացված են: Ներկայում դիտարկվող տարածաշրջանում որևէ գործող կենտրոնական կաթսայատուն չկա: Բնակավայրերի վարչական, հասարակական, ուսումնական, առողջապահական և արտադրական օբյեկտների, ինչպես նաև անհատական շենքերի ջերմամատակարարումն իրականացվում է ինչպես գազի վառարանների, այնպես էլ էլեկտրական տաքացուցիչների միջոցով, բնակչության որոշ հատված օգտագործում է նաև փայտի վառարաններ:

Հաշվի առնելով բնակավայրերի ավտոմոբիլային պարկի սպասվող աճը՝ հաշվարկային ժամկետի վերջում նախկինի պես օդի աղտոտման մեջ գերակայող բաժինը կկազմի ավտոմոբիլային տրանսպորտը: Զեռուցման շրջանում որոշակի մաս կկազմեն նաև ջեռուցման համակարգերում վառելիքի այրման արտանետումները: Ամրացնելով նախատեսվել են միջոցառումներ՝ ուղղված օդի աղտոտման մակարդակի նվազեցմանը:

Դիտարկվող տարածաշրջանի մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուր են հանդիսանում ավտոտրանսպորտը և ջեռուցման համակարգերը:





Միկրոռեգիոնի բնակավայրերի էլեկտրամատակարարումն իրականացվում է տրանսֆորմատորային ենթակայանների միջոցով: Էլեկտրահաղորդման օդային գծերի տեխնիկական վիճակը գնահատվում է բավարար:

Տարածաշրջանում փհէկ-երի գործունեության արդյունքում ի հայտ են եկել մի շարք խնդիրներ և խոչընդոտներ: Փհէկ-եր կառուցումը վնաս է հասցնում գետերի էկոլոգիային, քանի որ դրանք խախտում են գետերի ջրային և ջերմային ռեժիմները, խոչընդոտում են ձկների բազմացմանը, նպաստում են գետերի ծանծաղացմանը:

«Կոտայք-10» տարածաշրջանում ջրամատակարարման համակարգերի գնահատվում է անբավարար: Ջրամատակարարման ցանցը գոտիավորված է: Ջրաղբյուրում առկա է քլորակայան: Ջրամատակարարման ցանցերն ունեն արդիականացման կարիք: Հոսակարուստների զգալի տոկոսը, ջրաչափերի բացակայությունը, ինչպես նաև խմելու ջրի օգտագործումն ոռոգման նպատակով խոչընդոտ են հանդիսանում բնակավայրերում շուրջօրյա ջրամատակարարում ապահովելու համար: Ջրմուղի ցանցում անհրաժեշտ թույլատրելի ճնշում և պահանջվող ջրաքանակ ապահովելու համար բնակավայրերի ջրամատակարարումը նպատակահարմար է իրականացնել գոտիներով՝ նախատեսելով նոր ՕԿՁ-ներ:

Ջրվեժ բնակավայրի բնակչության խմելու-տնտեսական կարիքների նպատակով պահանջվող ջրաքանակն որոշելու համար, որպես ելակետային տվյալ, ընդունվել է 200 լ/օր/մարդ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ջրվեժ բնակավայրը գտնվում է Երևան քաղաքի սպասարկման գոտում է: Մյուս 2 բնակավայրերի համար ելակետային տվյալ է ընդունվել 150 լ/օր մարդ: Արտադրական կարիքների համար պահանջվող խմելու որակի ջրաքանակն ընդունվել է բնակչության ջրապահանջի 15%-ի չափով:

Ջրամատակարարման համակարգերը նախատեսվում են կենտրոնացված, բնակչության խմելու-կենցաղային, արտադրական և հակահրդեհային ջրապահանջներն իրականացվելու են մեկ ջրատարով:

Մարզում բացակայում են մաքրման կայանները, որի պատճառով կեղտաջրերը լցվում են գետերը և Աղբյուրակի ջրամբար: Դիտարկվող միկրոռեգիոնի բնակավայրերից մասնակի կոյուղացված է Ջրվեժ բնակավայրը, որի կոյուղու հոսքաջրերը հեռացվում են Աերացիայի կոյուղու մաքրման կայան: Չովք և Ձորաղբյուր բնակավայրերը կոյուղացված չեն:

Գյուղական բնակավայրերի բնակչությունն օգտվում է բակային հորատիպ զուգարաններից:

Ստորգետնյա, ինչպես նաև մակերեսային ջրերի ավազանն աղտոտումից զերծ պահելու նպատակով սույն նախագծի շրջանակներում նախատեսվում է կոյուղացնել տարածաշրջանի բոլոր բնակավայրերը: Կոյուղու հոսքաջրերի հեռացումը կիրականացվի միջթաղամասային ինքնահոս կոյուղատարերի և գլխավոր կոլեկտորի միջոցով:

«Կոտայք-10» տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագիծն ընդգրկում է Ջրվեժ բնակավայրը (խոշորացված համայնք), Ձորաղբյուր և Չովք բնակավայրերը: Դիտարկվող միկրոռեգիոնի բնակչության թիվը ներկայում կազմում է 9498 մարդ, հեռանկարային հաշվարկային թիվը նախագծով կազմում է 11,397 մարդ:

«Կոտայք-10» տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագիծը ընդգրկում է 5490.48 հա տարածք, այդ թվում փաստացի և հեռանկարում՝

- գյուղատնտեսական հողեր – 3181.15 հա, հեռանկարում – 2924.277 հա,
- բնակավայրերի հողեր – 940.47 հա, հեռանկարում – 1199.223 հա,
- արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր – 77.04 հա, հեռանկարում – 68.05 հա,
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմուն. ենթակառուց. հողեր – 37.6 հա, հեռանկարում – 69.75 հա,









ընդլայնվելու տարածքային ռեզերվներ և դիտարկվում են որպես փակման ենթակա գերեզմանատներ:

Գործող գերեզմանատները, գտնվելով բնակելի հատվածներին մոտ, պարսպատառված չեն և սանիտարական պահպանման գոտին հիմնականում պահպանված չէ: Գերեզմանատների սանիտարապաշտպանիչ գոտիների համար նախատեսվում է մինչև 40 % տարածքի ծառատնկումներ՝ ստեղծելով սովոր պաշտպանիչ ծառաշերտ: Նախատեսվում է ցանկապատում և ցանկապատի երկայնքով սանիտարական ծառատնկումներ: Գյուղատնտեսական հողերով /վարելահողեր/ շրջապատված գերեզմանատունը պահպանելու է առնվազն 40 մետր լայնությամբ սանիտարական գոտի, որի առնվազն 60 % նախատեսվում է ծառապատել՝ ստեղծելով սովոր պաշտպանիչ ծառաշերտ:

«Կոտայք-10» տարածաշրջանի կանաչապատման համակարգի կայուն զարգացման համար իրականացվելու են գործողությունների համալիր ծրագիր, որն իր մեջ կարունակի Հաշվետվությամբ սահմանված հիմնադրույթները: Գլխավոր հատակագծով հատկացվել է ընդհանուր 7.45 հա տարածք սանիտարական գոտիների կանաչապատման համար, 15.23 հա տրամադրվել է ամառանոցային կառուցապատման համար, որտեղ հողամասի առնվազն 70 %-ը տրամադրվում է այգիների, բանջարանոցների և ծաղկանոցների կազմակերպման համար, բնակելի կառուցապատման առնվազն 60% -ը և հասարակական կառուցապատման առնվազն 20%-ը սահմանվել են կանաչապատման համար: Նախագծված են նաև մագիստրալ ճանապարհների, գերեզմանոցի և այլ օբյեկտների պահպանության գոտիների կանաչապատում:

«Կոտայք-10» տարածաշրջանի բնակավայրերի տարածքում առկա ջրահեռացման համակարգերի որոշ մասը գտնվում է ոչ բավարար վիճակում (դեֆորմացված է, թեքությունները պահպանված չեն), ինչի արդյունքում տարածքի հեռացման ենթակա հոսքաջրերը ներծծվում են հողի մեջ կամ անկանոն առուների միջոցով են հեռանում: Հորդ անձրևների և հալոցքների ժամանակ հնարավոր են տարածքների հեղեղումներ: Հեղեղումներից խուսափելու նպատակով կենցաղային կոյուղուն զուգահեռ նախատեսվում է նաև հեղեղատար կոյուղի, որի նպատակը անձրևաջրերի և հալոցքից առաջացած ջրերի կազմակերպված հեռացումն է՝ համայնքում բարեկարգ վիճակ և սանիտարահիգիենիկ պատշաճ մակարդակ ապահովելու համար:

ՇՄԱՌԳ հաշվետվության կից փաստաթղթերում վերլուծվել է նաև «Կոտայք-10» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական /բնակավայրերին սպառնացող բնածին վտանգները, վտանգավոր երկրաբանական երևույթները /սողանք, քարաթափում/, հնարավոր արտակարգ ռիսկերը և առաջարկվել են կանխարգելմանը և մեղմացմանն ուղղված նախագծային լուծումներ:

«Կոտայք-10» տարածաշրջանի զարգացման ծրագրով նախատեսվող աշխատանքները կնպաստեն շրջանի սոցիալական և բնապահպանական իրավիճակի բարելավմանը: Շրջակա միջավայրի պահպանության, բնապահպանական իրավիճակի բարելավման և բնակչության կենսամակարդակի բարձրացման համար առաջնահերթ և հեռանկարային միջոցառումները հետևյալն են՝

- բնակելի և հասարակական կառույցների ջերմամատակարարման համակարգի կատարելագործում,
- ճանապարհափողոցային ցանցի բարելավում, գյուղամիջյան ճանապարհների լուսավորության անցկացում,
- կառուցապատված հատվածի կանաչապատման ընդարձակում,
- վերահսկողության սահմանում մեքենաների տեխնիկական վիճակին և որակին, ավտոտրանսպորտի զինում արտանետվող գազերի չեզոքացուցիչներով և այլն,





- հասարակական վայրերի բարեկարգում և ասֆալտապատում, խաղահրապարակների կառուցում,
- ջրամատակարարման համակարգի և կոյուղու կառուցում և վերանորոգում,
- ոռոգման ներքին ցանցի վերականգնում, կաթիլային ոռոգման համակարգի ներդնում,
- գետ թափվող տնտեսակենցաղային և արտադրական հոսքաջրերի կենսաբանական մաքրման կայանի նախագծում և կառուցում,
- վնասված հասարակական և արտադրական նշանակության շինությունների և կառույցների բերեկարգում,
- ջրամբարների կառուցում,
- հանգստի գոտիների ստեղծում,
- աղբի տեսակավորման և աղբահանության կազմակերպում,
- վերամշակման արտադրամասերի ստեղծում,
- ճանապարհի եզրերին, ռեկրեացիոն գոտիներում կանաչապատման, ծառատնկման աշխատանքների իրականացում,

- անտառների հիմնման և ընդլայնման աշխատանքների իրականացում,
  - արդյունաբերությունում առաջատար տեխնոլոգիաների ներդնում,
- գյուղատնտեսական հողերի բերրիության բարձրացմանն ուղղված միջոցառումներ և այլն:

«Կոտայք-10» տարածաշրջանի ՄՄՍՏՊՓ նախագծում արտացոլված են բնական պաշարների (օդ, ջուր, հող, բուսականություն, հանքեր) ինտենսիվ և արդյունավետ օգտագործման վերաբերյալ նախագծային գործունեության արդյունքները՝ տնտեսության կազմակերպման, կոմունիկացիաների, կաթսայատների տեղադրման, անթափոն տեխնոլոգիաների և մաքրման սարքավորումների կիրառմամբ, կենցաղային և արդյունաբերական թափոնների մաքսիմալ օգտագործման և վնասագերծման ճանապարհով:

Հիմնադրույթային փաստաթղթի նախագծով նախատեսվում է նաև ջրային ռեսուրսների ու թափոնների կառավարման ոլորտների և խախտված հողերի հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացման ծրագրերի կազմում և իրականացում:

Մշտադիտարկումների արդյունքների հիման վրա իրականացված հետնախագծային վերլուծությունը թույլ կտա հետագա քաղաքաշինական հիմնադրույթային փաստաթղթերում ներառել տնտեսության զարգացման առավել իրատեսական ոլորտները, ներդրումային ծրագրերի գրավչության բարձրացմանը՝ այս ամենը համադրելով տարածաշրջանի բնապահպանական պահանջների, նորմերի և սահմանափակումների հետ՝ չանտեսելով մարդու առողջության, բնականոն զարգացման և բնառեսուրսների ռացիոնալ օգտագործման հիմնախնդիրները:

**Պատճառաբանական մաս.** «Կոտայք-10» միկրոռեգիոնում ընդգրկված բնակավայրերի տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համալիր կերպով գնահատվել են առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները: Բնակավայրերի կարևոր էկոլոգիական հիմնախնդիրների լուծումները կնպաստեն տարածքի էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը:

Փորձաքննության գործընթացին մասնկացել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Քաղաքաշինության և Կադաստրի կոմիտեները, Կոտայքի մարզպետարանը, որոնց կողմից ներկայացված առաջարկություններով և դիտողություններով հաշվետվությունը լրամշակվել է:



Միկրոռեգիոնում ընդգրկված բնակավայրերի հանրությունը հանրային քննարկումների միջոցով մասնակցել է հաշվետվության գնահատման և փորձաքննական գործընթացին:

Շրջակա միջավայրի պահպանության բաժնում տրվել են շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտ, ջրային ռեսուրսներ, հողեր, ընդերք, կենսաբազմազանություն) վիճակի բարելավմանը և պահպանմանն ուղղված միջոցառումների հեռանկարները:

### Փորձաքննական պահանջներ

- Հիմնադրույթային փաստաթղթի շրջանակում նախատեսվող գործունեությունների համապատասխան նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումը, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

- Միկրոռեգիոնում քաղաքաշինական հեռանկարային լուծումներն իրականացնելիս՝ բացառել անտառային և ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների հողերի նպատակային նշանակության փոփոխությունները:

- Հիմնադրույթային փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ), կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր:

### ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Հայնախագիծ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված՝ Կոտայքի մարզի «Կոտայք-10» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Զերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ, առաջատար մասնագետ՝

Աստղիկ Վարդանյան